

Լ. Կ. ԵԶԵԿՅԱՆ, Հայոց լեզու, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2005, 398 էջ:

Հայտնի է, որ լեզուն՝ որպես հասարակական իրողություն, ունի երկակի բնույթ. մի կողմից այն «լեզվաբանություն» գիտաճյուղի ուսումնասիրման առարկան է, մյուս կողմից բոլոր գիտությունները, որոնց թվում նաև լեզվաբանությունը, ներկայացվում ու մեկնաբանվում են հենց լեզվի միջոցով: Ահա սրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ ցանկացած բնագավառի մասնագետ պետք է անհրաժեշտ չափով գիտենա լեզվական կանոններն ու օրինաչափությունները, գործնական-կիրառական առանձնահատկությունները: Այդ պատճառով բուհերի բոլոր ֆակուլտետների առարկայական ծրագրերում ներառված է նաև «հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացը: Լեզվական ֆակուլտետներում (ռամանագերմանական բանասիրության, ռուս բանասիրության, արևելագիտության, ժուռնալիստիկայի) հայերենի ուսուցումն անհրաժեշտ է նաև որպես մասնագիտական երկրորդ առարկա: Ուսուցումը հետաքրքիր, մատչելի և արդյունավետ դարձնելու համար հարկավոր են համապատասխան դասագրքեր ու գործնական աշխատանքների ձեռնարկներ: Այս նպատակն ունի բանասիրական գիտությունների դեկտոր, պրոֆեսոր Լ.Լուս Եզեկյանի «Հայոց լեզու» դասագիրքը (մասնագիտական խմբագիր՝ բանասիրական գիտությունների դեկտոր Ռ. Մաքսպետոյան): Ինչպես ներածական խոսքում նշում է հեղինակը, «Հայոց լեզվի սահմանված ծրագիրը ամբողջովին յուրացնելու համար ուսանողները ստիպված են կարդալու առնվազն 4-5 դասագիրք», ուստի «ուսանողության պահանջները բավարարելու, ուսումնառության գործընթացում նրանց ժամանակը խմայելու նպատակով» ստեղծվել է այս ամփոփ դասագիրքը: Բոլոր ֆակուլտետներում էլ ուսանողները, պայմանավորված իրենց մասնագիտության բնույթով (հումանիտար, բնագիտական), հայոց լեզվի դասաժամերին տարբեր խորությամբ ուսումնասիրում են թե՛ հնչյունաբանությունը, թե՛ բառագիտությունը, թե՛ քերականությունը և թե՛ լեզվի ռճական առանձնահատկությունները: Լ. Եզեկյանի դասագիրքն իր մեջ ներառում է լեզվական այս բոլոր մակարդակները: Համեմատաբար քիչ են ներկայացված ռճական իրողությունները, որոնց հեղինակն անդրադարձել է առանձին դասագրքով՝ «Ոճագիտություն» (Երևան, 2003):

«Հայոց լեզու» դասագրքի ամենաէական արժանիքը մատչելիությունն է, որը ուսումնական գրքերի կարևոր հատկանիշն է: Պարզ և աշխույժ ոճով ներկայացված են գրական ու խոսակցական լեզուների, բարբառների փոխհարաբերությունները, ուղղագրության և ուղղախոսության հիմնական սկզբունքները, քերականական զանազան իրողությունները: Դա նպաստում է, որ ուսանողներն առարկան յուրացնեն հեշտությամբ, ամբողջական պատկերացում կազմեն լեզվական համակարգի մասին, գիտակցեն խոսք կազմելիս իրենց և այլոց կատարած սխալներն ու վրիպումները:

Գրքի սկզբում հանգամանորեն ներկայացված են լեզվի պատմական զարգացման ընթացքը, մաշտոցյան այբուբենի ստեղծման պատմությունը, միջին հայերենի, աշխարհաբարի էական առանձնահատկությունները, արևելահայերենի և արևմտահայերենի համակարգերի հիմնական տարբերությունները: Փոքր-ինչ սեղմ ու համառոտ է Մաշտոցին ու հայ գրերի գյուտին վերաբերող մասը: Թերևս անհրաժեշտ էր ավելի հանգամանորեն անդրա-

դառնալ Մաշտոցի գործունեությանը, նաև համառոտ ներկայացնել նախամաշտոցյան գրի գոյությանը վերաբերող տարբեր կարծիքները:

Այս բաժնին հաջորդում է «Հնչյունաբանությունը»: Այստեղ քննված են ձայնավոր և բաղաձայն հնչյունները, նրանց դասակարգման սկզբունքները, վանկին և շեշտին վերաբերող հարցերը: Բերված են նաև տողադարձի սկզբունքները: Առանձին-առանձին ներկայացված են պատմական, դիրքային և փոխազդեցական հնչյունափոխությունները՝ համապատասխան օրինակներով: «Հնչյունաբանություն» բաժնին ավարտվում է ուղղագրությանը և ուղղախոսությանը նվիրված ենթաբաժիններով: Վերջիններս բավականին ծավալուն են, քանի որ ուղղագրության և ուղղախոսության ուսուցումն ունի խիստ գործնական նպատակ և չափազանց կարևոր է բոլորի համար՝ անկախ մասնագիտությունից: Տարբեր տեղերում, իսկ ավելի հանգամանորեն «Գրաբանություն» բաժնում հեղինակը խոսում է հայոց այբուբենի հատկանիշների մասին, սակայն ցանկալի կլիներ, որ համեմատական զուգահեռներ անցկացվեին հայերենի և այլ լեզուների այբուբենների միջև, առանձին և վերլուծաբար ներկայացվեին հայոց այբուբենի առանձնահատկությունները (օրինակ՝ հնչյութային և գրային լիակատար համապատասխանությունը, լրացուցիչ նշաններից զերծ լինելը, մաշտոցյան շրջանի գրության և արտասանության սկզբունքներն ու նրանց հետագա փոփոխությունները և այլն):

«Բառագիտություն» բաժնում նախ խոսվում է բառի հիմնական հատկանիշների, բառույթի, բառաձևերի ու բառի տարբերակների մասին: Դրանից հետո քննվում են բառապաշարի ձևախմբատային խմբերը՝ հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Թեև դասագիրքը զբղված է բուհերի ուսումնական ծրագրին համաձայն, սակայն հեղինակը միտումնավոր քերականական բաժինն ավելի սեղմ է ներկայացրել, քան բառագիտականը, քանի որ բառը՝ որպես լեզվի հիմնական իմաստակիր միավոր, առանձնահատուկ դեր ունի, և մասնավորապես լեզվական ֆակուլտետներում կարևոր է բառագիտության հանգա-

մանալից ուսուցումը. դա նպաստում է նաև քարգմանչական ունակությունների զարգացմանը: Դասագրքում շեշտված է նաև հոմանիշների, հականիշների, համանունների ու հարանունների ոճական արժեքը:

Բառապաշարի ձևախմբատային խմբերից հետո ներկայացված է իմաստափոխությունը: Հետաքրքիր օրինակներով հիմնավորելով՝ հեղինակը նախ խոսում է իմաստափոխության տեսակների՝ բառիմաստի ընդլայնման, բառիմաստի նեղացման, բառիմաստի շրջման մասին, այնուհետև քննում իմաստափոխության հիմունքները: Այս ենթաբաժինը ևս ուսուցողական կարևոր նշանակություն ունի, քանի որ բերված են նաև այնպիսի բառեր, որոնք բառիմաստի թյուրըմբռնման հետևանքով հաճախ սխալ են գրվում ու արտասանվում կամ էլ տեղին չեն գործածվում (օրինակ՝ *մեղանչել*, *կատարելիություն* և այլն): Բառապաշարը, ինչպես հայտնի է, արտացոլում է տվյալ ժողովրդի կենցաղը, մշակույթը, պատմական միջավայրը, աշխարհագրական պայմանները, սովորույթները, այսինքն՝ լեզվամտածողությունը: Հետևաբար բառապաշարի ուսումնասիրության միջոցով հնարավոր է բավականին տեղեկություններ իմանալ ժողովրդի վերաբերյալ: Բառապաշարը հասարակական կյանքի զարգացման արտացոլման հայելին է: «Ժամանակակից հայերենի բառապաշարը» ենթաբաժնում հեղինակը քննում է փոխառությունները, օտարաբանությունները, բնածայնական բառերը, գրաբարյան, միջին հայերեն, բարբառային, արևմտահայերեն բառաշերտերը, նոր հայերեն բառերը: Առանձին վերնագրերով են ներկայացված բարբառային և ժողովրդախոսակցական բառաշերտերը, ժարգոնային բառերն ու գոեհկաբանությունները, հնաբանություններն ու նորաբանությունները: Սրանցից ամեն մեկը յուրովի արտացոլում է հայ ժողովրդի պատմական ուղին, բացահայտում հասարակական շատ իրողություններ, ուրվագծում տարբեր ժամանակներում այլ ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, մշակութային ու տնտեսական շփումները: Ուսուցողական առումով կարևոր է հատկապես ժարգոնային բառերի ու գոեհկաբանությունների վերլուծությունը:

Բառապաշարի շերտերի քննությունից հետո ներկայացված են հայերենի բառակազմության սկզբունքները, ձևային տեսակները, ածանցների դասակարգումը, բարդությունների տեսակները: Բառակազմությանն առնչվող մի շարք վիճելի դրույթներ ու լուսաբանման կարոտ հարցեր կան, որոնցից հեղինակը թերևս մտածված է խուսափել՝ դասագիրքը գիտական մենագրության չվերածելու նպատակով: Սակայն ցանկալի է, որ այս բաժնում ավելի շեշտված ներկայացվեին բառակազմական այն իրողությունները, որոնք տարաբնույթ սխալների պատճառ են դառնում (օրինակ՝ *գունավոր - գույնավոր, օրական - օրեկան* և այլն): Սրանց մի մասին հեղինակը այլ առիթներով անդրադառնում է, բայց միասնական ներկայացված լինելու դեպքում դրանք ավելի դյուրըմբռնելի կլինեին:

Հայտնի է, որ սովորաբար բառագիտության ենթաբաժիններ են համարվում նաև դարձվածաբանությունն ու բառարանագրությունը, թեև լեզվաբանների մի մասը դարձվածաբանությունը դիտում է շարահյուսության բաժին: Դարձվածային միավորների ուսուցումը կարևորվում է նրանով, որ դրանք իմանալու և տեղին օգտագործելու միջոցով խոսողն իր խոսքը կարող է ազատել միապաղաղությունից, դարձնել աշխույժ և կենդանի: Հեղինակը հատուկ անդրադարձ է նաև դարձվածային միավորների քարզամանության առանձնահատկություններին, նշել այն սխալները, որոնք երբեմն հանդիպում են բառացի քարզամանությունների հետևանքով: Սա կարևոր է հատկապես լեզվական ֆակուլտետների ուսանողների համար, որոնք իրենց մասնագիտության բերումով միշտ առնչվում են քարզամանական զանազան խնդիրների: Դանաչողական նշանակություն ունի նաև այն դարձվածքների ուսուցումը, որոնք հայերենին են անցել այլ լեզուներից (օրինակ՝ *տրոյական ձի, սյրոկրուստեսյան մահիժ* և այլն):

«Բառարանագրություն» ենթաբաժնում ներկայացված են բառարանների տեսակները՝ բանասիրական (լեզվաբանական) և հանրագիտական: Սակայն առանձին բաժնով, հանգամանորեն ներկայացված են միայն բանասիրական բառարան-

ները, իսկ մի ամբողջական հատված նվիրված է Հրաչյա Աճառյանի բառարանագրական վաստակին: Ցանկալի է, որ առանձին ներկայացվեին նաև հանրագիտական նշանավոր բառարանները:

«Քերականություն» բաժնում ներկայացված են ժամանակակից հայերենի ձևաբանական ու շարահյուսական համակարգերը և կետադրության հիմնական սկզբունքները: Արդեն նշել ենք, որ հեղինակը գիտակցաբար ավելի մեծ տեղ է հատկացրել բառագիտությանը, սակայն սա չի նշանակում, թե անտեսված են ձևաբանական և շարահյուսական իրողությունները: Անշուշտ, առանձին-առանձին խոսվում է յուրաքանչյուր խոսքի մասի, նախադասության յուրաքանչյուր անդամի առանձնահատկությունների մասին, քննվում են բարդ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները, և ասվածը հիմնավորվում է համապատասխան օրինակներով: Ծարահյուսության վերջում մեկնաբանվում է նաև պարբերությոթը, գնահատվում նրա ռճական արժեքը: Գիրքն ավարտվում է «Կետադրություն» բաժնով, որում բերված են կետադրական նշանների հիմնական կիրառությունները: Հեղինակին հիմնականում հաջողվել է քերականական թեմաների շարադրանքում խուսափել վիճելի դրույթներից ու անդրադառնալ միայն դասագրքային մեկնաբանություններին, սակայն կան նաև որոշ անհամապատասխանություններ: Օրինակ՝ սահմանական եղանակի ժամանակների մասին խոսելիս հեղինակը նշում է, որ այդ եղանակն ունի յոթ ժամանակ՝ հավելելով, որ լեզվաբանների մի մասն ընդունում է ինը ժամանակ՝ ներառելով հարակատար և անցյալի հարակատար ժամանակները: Ժամանակներն առանձին-առանձին քննելիս չի խոսվում հարակատարով ձևերի մասին, սակայն դրանք ներկայացված են խոնարհման ընդհանուր աղյուսակում: Հետևաբար ճիշտ կլիներ մյուս ժամանակների նման դրանց էլ անդրադառնալ առանձին կամ չներկայացնել խոնարհման աղյուսակում: Սրանց մասին չխոսելը և միայն աղյուսակով ներկայացնելն էլ թերևս համառոտության ձգտելու միտում է, սակայն դրա հետևանքով տեսական նյութի և աղյուսակի տվյալների

միջև անհամապատասխանություն է առաջացել: Բայց այսպիսի վրիպումները փոքրաթիվ են, ու այս փոքրիկ ընդհանուր վերլուծությունից էլ պարզ է, որ ստեղծվել է սեղմ, մատչելի ու գործնականում խիստ անհրաժեշտ մի դասագիրք, որի կարիքը վաղուց էր զգացվում: Այս դասագիրքը կթեթևացնի թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների աշխատանքը և ուսուցումը կդարձնի ավելի արդյունավետ: Նշենք, որ գրքում կան նաև որոշ վիճելի դրույթներ, ո-

րոնք տարրեր գրքերում տարրեր ձևերով են մեկնաբանվել, սակայն դրանց գոյության պատճառն այն է, որ հեղինակը միտումնավոր խուսափել է գիտական բանավեճերից, չի շեղվել դասագրքային ոճով շարադրելու իր սկզբունքից և առանց ծանրաբեռնելու սովորողներին հիմնականում ներկայացրել է նորմատիվային համարվող մոտեցումներն ու դասակարգումները:

Ա. Լ. ՄԱՐԳԱՅԸ